ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2023 թվականի N:507 -Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ ՈՒ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ ՈՒ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 324-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի N1064-Ն որոշմամբ սահմանված ճառագայթային, քիմիական ու մարնրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգ ստեղծելու և գործունեության ապահովման կարգի 1-ին և 2-րդ կետերի, 5-րդ կետի 2-րդ ենթակետի, 7-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ապահովումն իրականացնելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական,

տեղեկատվության փոխանակման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ փոխանակվող տեղեկատվության տեսակների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Համակարգում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությունը.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչությունը.

4) «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզային կառույցը.

5) Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնը.

6) Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի «Ա.Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակեպությունը.

7) «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակեպության «Շիրակ» մասնաճյուղը.

8) «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակեպությունը.

9) «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիս» շահագործման տնօրինության «Շիրակ» տեղամասը.

4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

սահմանված կարգով համակարգել Համակարգի գործունեությունը, վերահսկել Համակարգում ընդգրկված մարմինների պատրաստականությունը, ղեկավարել նրանց աշխատանքներն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և

քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ իրականացնելիս, կազմակերպել մասնագետների ուսուցումը և վերապատրաստումը, իրականացնել Համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կատարման հսկողությունը:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգում ընդգրկված կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգում ընդգրկված կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 234-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 324-Ա որոշումը:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանին:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2023 թվականի
նոյեմբերի 29-ի N507-Ա որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում (այսուհետ՝ Մարզ) ճառագայթային, քիմիական, մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակի բնագավառում տեղեկատվության փոխանակման հարցերը:

2. Տեղեկատվությունը պետք է ներառի տեղեկություններ կանխատեսվող և գրանցված ճառագայթային, քիմիական, մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ:

3. Ելնելով իրավիճակից ներկայացվում է օպերատիվ և ընթացիկ տեղեկատվություն:

4. Արտակարգ իրավիճակների արձանագրման և իրավիճակի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվությունը տրվում է բոլոր շահագրգիռ կառավարման մարմիններին՝ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման միջոցառումների կազմակեպման նպատակով:

5. Ընթացիկ տեղեկատվությունը ներառում է տեղեկություններ Մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրավիճակի մասին:

6. Տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ Մարզի տարածքում շրջակա միջավայրի դիտարկում և ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրավիճակի հսկողություն իրականացնող պետական մարմինները:

7. Տեղեկատվության փոխանակումն իրականացվում է պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայությունների կողմից:

8. Տեղեկատվությունը ներկայացվում է վերադաս մարմիններին և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2023 թվականի
նոյեմբերի 29-ի N 507Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

h/h	Պետական կառավարման մարմինների, կազմակերպությունների անվանումը	Տեղեկատվության տեսակը	Ում է հաղորդվում	Տեղեկատվության պարբերականությունը
1	2	3	4	5
1.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակեպության «Շիրակ» մասնաճյուղ	-Կարանտինային հիվանդությունների արձանագրման և կասկածի դեպքում, - մարդկանց և կենդանիների համար ընդհանուր ինֆեկցիաների արձանագրման դեպքում, - այլ վարակիչ և մակաբուծային, տարափոխիկ հիվանդությունների արձանագրման դեպքում, - այլ վարակիչ հիվանդությունների բռնկումների և թունավորումների, անհայտ ախտածագման հիվանդությունների արձանագրման դեպքում, - ոչ վարակիչ (սննդային, օձի խայթոցից և այլ) թունավորումների արձանագրման դեպքում, - ջրատար համակարգի վթարի և մարդկանց զանգվածային հիվանդացության (այդ	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն	Շեղումներ արձանագրելի անհապաղ

		թվում սպառնալիքի դեպքում), - խմելու ջրում սանի-տարական նորմերին չհամապատասխանող արդյունքների (մարդկանց և կենդանիների զանգվածային հիվանդացության բերող) արձանագրման դեպքում:		
2.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսութ-յան և շրջակա միջավայրի պահպանության վարչություն «Հանրապետական անասնաբուժասան իտարական և բուսասանիտարակ ան լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզային կառույց «Հիվանդություններ ի վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակեպության «Շիրակ»	-Կենդանիների (գյուղա-տնտեսական և վայրի) զանգվածային հիվանդա-ցության, անկումների արձանագրման դեպքում: - կենդանիների (այդ թվում և արտասահմանից ներմուծված) հատուկ վտանգավոր ինֆեկցիա-ների արձանագրման, կասկածի դեպքում, - մարդկանց և կենդանիների համար ընդհանուր ինֆեկցիա-ների արձանագրման դեպքում, - անհայտ և անսովոր հիվնդացության դեպքերի արձանագրման դեպքում, - կենդանիների անհայտ ախտածագման թունա-վորումների արձանագըր-ման դեպքում, - բույսերի զանգվածային հիվանդացության դեպքում, - անասունների արյան սիճուկաբանական հետազոտություն, -Անասնաբուժասանի-տարիայի և բուսասա-նիտարիայի ոլորտի ծառայություններ, - հատուկ վտանգավոր վարակների հսկողութ-յուն, լաբորատոր հետա-զոտություններ, հիվանդ-ությունների վերահսկում և կանխարգելում, - Մարզի տարածքում	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն	Շեղումներ արձանագրելի անհապաղ

	մասնաճյուղ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոն	տեսչական, վերահսկողական գործառույթներ, անասնաբուժության, սննդի անվտանգության և բուսասանիտարիայի բնագավառներում:		
3.	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն	- Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ուժեղ քամիներ, անձրևային վարարումներ, հեղեղումներ) արձանագրման դեպքում, - ճառագայթաակտիվ նյութերի արտանետմամբ վթարների և պատահարների արձանագրման դեպքում, - տեխնածին վթարների արձանագրման դեպքում, - քիմիական վտանգավոր նյութերի արտանետումով վթարների արձանագրման դեպքում, - շրջակա միջավայրում քիմիական վտանգավոր նյութերի սահմանային թույլատրելի խտությունների արձանագրման դեպքում, - ռազմական թունավոր նյութերի կիրառման (կիրառման վտանգի), արտանետումով վթարների արձանագրման դեպքում, - խմելու ջրի, ոռոգման ջրի, կոյուղու ջրատար համակարգի խոշոր (մարդկանց և կենդանիների զանգվածային հիվանդացության և հեղեղումներ առաջացնելու սպառնալիք ներկայացնող) վթարների արձանագրման դեպքում, -մարդկանց, կենդանինե-	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն	Շեղումներ արձանագրելի անհապաղ

		րի զանգվածային հիվանդացության արձանագրման դեպքում, - անտառներին և մշակաբույսերի ցանկատարածություններին վտանգ ներկայացնող հրդեհների արձանագրման դեպքում:		
4.	«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակեպություն Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի «Ա.Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակեպություն	-Հիդրոօդերևութաբանական տվյալներ, - տվյալներ շրջակա միջավայրի ճառագայթային ֆոնի վերաբերյալ, - տվյալներ շրջակա միջավայրի օդի աղտոտվածության վերաբերյալ:	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն մյուս կառույցներին՝ ըստ անհրաժեշտության	Հայաստանի Հանրապետությ-յան ներքի գործերի նախարարությ-յան փրկարա ծառայության Շիրակի մարզային փրկարարակա վարչություն՝ օրը երկր անգամ ժամ 10:00-ին 20:00-ին: Շեղումներ արձանագրելի անհապաղ
5.	«Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիս» շահագործման տնօրինության Շիրակի տեղամաս	- Խմելու ջրի, ոռոգման ջրի, կոյուղու ջրատար համակարգի խոշոր (մարդկանց և կենդանիների զանգվածային հիվանդացության և հեղեղումներ առաջացնելու սպառնալիք ներկայացնող) վթարների արձանագրման դեպքում, - խմելու ջրում սանիտարական նորմերին չհամապատասխանող արդյունքների (որոնք կարող են բերել մարդկանց և կենդանիների զանգվածային հիվանդացության) արձանագրման դեպքում:	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն «Հիվանդությունների	Շեղումներ արձանագրելի անհապաղ

			վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակեպության «Շիրակ» մասնաճյուղ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է